

բաստուի թշնամւոյն գլուխը ծեծելու : () Եւ կը սկսի շքեղ, կուրծքը դէպ'ի վեր կը տնկէ, ու բաղէին դէմ կը յարձրիկ որ խաճնէ զինքն ու թունաւորէ . բայց օձին բոլոր աս պատրաստութիւնները սովորաբար փուճ'ի ելլեն . վասն զի բաղէն ամէն կերպով զինքը պաշտպանելով, ասդին անդին դառնալով ու ցատքըտելով՝ միշտ բացած թւին փետուրները դէպ'ի օձին բերանը դարձուցած կը կռուի . օձը կը խաճնէ փետուրներն ու թոյնը անոնց վրայ կը թափէ, բայց անօգուտ . բաղէն անդադար փետուրներովը կը զարնէ կը վիրաւորէ իր թըշնամին, ինչուան որ անիկայ կիսամեռ կ'իյնայ . բաղէն կտուցովը կը բռնէ գլխէն ու գանկը կը ջախջախէ կամ կը ծակէ : () Եւ որ մեծ չըլլայ օձը, ամբողջ կը կլլէ . իսկ թէ որ մեծերէն է, կտոր կտոր կ'ընէ ու անանկ կ'ուտէ : () Եւ այլեան աս բաղէներէն մէկը սպաննելով՝ ստամոքին մէջ գտեր է 21 հատ մանր կրիայ, 11 մողէս ու իրեք օձ՝ միջակ մեծութեամբ . աս սողուններուն գանկերը բոլոր մէկգիւն մէկալը ծակած են եղեր . իսկ խածիքին՝ մէջ գտեր է սագի հաւկը՝ թի մեծութեամբ . գնտակ մը որ օձերու ու մողէսներու ոսկորներ են եղեր . անշուշտ աս նիւթերը բաղէն մարտէլ չկրնալով՝ ստամոքսէն դուրս կը ձգէ : Բայց բարձր թռուիւրու կամ ցած ծառերու վրայ կը դնէ՝ խիտ տերեւներու մէջ, ու ներսի դին խտտերով ու փետուրներով կը պատէ : Եւ մէն մէկ թռչուն երկու իրեք հաւկի թ'ի կ'ածէ՝ հասարակ սագի հաւկը թի մեծութեամբ, բայց աւելի երկայնաձև ճերմակ ու տեղ տեղ կարմիր բծերով : Չաքերը երկար ատեն տկար կը մնան . առջի բերան ծնկուըներնուն վրայ կը քալեն ինչուան չորս հինկ ամիս . ուստի ինչուան այսչափ

ատեն մայրերնին կր կերակրէ զիւրենք:

Ինչպե՞ս սովորաբար լուռ կը կենայ, ու քիչ անդամ տուր ու անախորժ ձայն մը կը հանէ՝ արծիւի ձայնին նման. երբեմն ալ ասդիս անդին վազելու աւտեն, կամ երբոր մէկը իրեն մօտենայ դուրտի պէս կը կռկուայ։ Պզտիկն որ բռնես, կրնայ ինչուան այնչափ ընտանենալ որ հաւերու հետ ալ խաղաղու թեամբ կը կենայ. երբեմն ալ թէ որ երկու հաւ սկսին կռուիլ՝ մէջերնին կը մտնէ, կը բաժնէ իրարմէ ու կը հանդարտեցընէ. բայց թէ որ կերակուրը մոռցուի, նախ կը սկսի վառեակները ողջ ողջ ուտել. թէ որ անոնցմով չկշտանայ, կը սկսի անոնց մայրերն ալ ուտել։ Ի՞նչ բաղէին բարձրութիւնը՝ գլուխը շիտակ դէպ ՚ի վեր բռնած ատենը իրեք ոտք ու երկու իրեք բթաչափ է. իսկ բոլոր մարմնոյն երկայնուածիւնը քիչ մը աւելի երկայն է. ասոր գրեթէ կէսը թւերուն երկայնութիւնն է. սրունքը մէկ ոտքէն աւելի բարձր է, և մարմինը հասարակ հնդկահաւի մը մարմնոյն չափ է։

§ 56 乙 10 ト 4

ԳՈՇԱՐՈՎ առաջի ձեռքդ եմ կոչեած,
Հատոնքը Զանան թողուն անբաց,
Ես ու անուհես եմք նոյն մարմին:
Քան զայս գրգռար ինչ կայ գիւրին:

ՅՈՒՆԻՍԿՈՒԼԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՐ ԽՂՋՄՏԱՆՔՆԵՐ: